

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2013 - 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է՝

Համայնքի ավագանու 28. 03. 2013թ. N 11 - Ն որոշմամբ

\_\_\_\_\_ **ԱՊՐԱՐԱՆ – 2013թ.**



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք  
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Դեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 11 - Ն

**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2013 – 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան քաղաքային համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ Ապարան քաղաքային համայնքի զարգացման 2013 - 2016 թվականների քառամյա ծրագիրը՝ համաձայն N - 1 հավելվածի:
2. Պարտավորեցնել համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանին՝  
ա/. մոբիլիզացնել քաղաքապետարանի աշխատակազմի, համայնքի վարչական տարածքում գործող բոլոր կազմակերպությունների և բնակչության ուժերը՝ զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետներում պատշաճորեն կատարելու համար:  
բ/. ծրագրի իրականացման ընթացքի մասին հաճախակի իրազեկել բնակչությանը:  
գ/. ապահովել քաղաքի զարգացման քառամյա ծրագրի հրապարակայնությունը
3. Ավագանու բոլոր անդամների խնդիրը համարել անհրաժեշտ օգնություն և օժանդակություն ցուցաբերելու համայնքի ղեկավարին՝ քաղաքի զարգացման քառամյա ծրագրի իրականացման գործում, նպաստել քաղաքի բնականոն զարգացմանը, բնակչության կյանքի պայմանների բարելավմանը, սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային խնդիրների լուծմանը :
4. Սույն որոշման կատարման ընթացքին անրադառնալ յուրաքանչյուր տարվա վերջին:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանի վրա:

Ավագանի՝	Կողմ ( 6 )	Դեմ ( 0 )	Ձեռնպահ ( 0 )
----------	------------	-----------	---------------

Նվարդ Բարսեղյան  
Արսեն Պողոսյան  
Հովհաննես Շահբազյան

Վարդան Բարսեղյան  
Արկաղի Կարապետյան  
Հայկ Շնավոնյան

Համայնքի ղեկավար՝

Գ. Աբրահամյան

## ԾՐԱԳԻՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում
2. Հանրապետական, մարզային և համայնքային ծրագրերով նախատեսվող ծրագրերի ներկայացում և գնահատում
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
4. Համայնքի առաջնահերթ նպատակների առաջադրում և ձևակերպում՝ ըստ ոլորտների
5. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում
6. Համայնքի ոլորտային կապիտալ ծրագրերի ձևակերպում և ամփոփում
7. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները  
Եզրափակում

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը

Հավելված 2. Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ.

Ապարանի քաղաքային համայնքի քառամյա զարգացման ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից, քննարկվում է քաղաքապետարանի աշխատակազմի, համայնքի վարչական տարածքում գործող տարբեր կազմակերպությունների, բնակչության տարբեր խմբերի հետ, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից, և դրվում գործողության մեջ: Ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքային խնդիրների արդյունավետ լուծման և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացման հանրագումարը:

### Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակն է՝

Ծրագրերի իրականացման ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության կյանքի պայմանները, հոգատարություն հանդես բերել նրանց սոցիալ – տնտեսական, կուլտուրալ – կենցաղային, մշակութային և հանգստի պայմանների բարելավմանը, նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը և ազատ աշխատուժի զբաղվածության ապահովմանը, հետևողականություն դրսևորել արտագաղթի նվազեցման, աղքատության մակարդակի հաղթահարման գործում:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

#### 1.1 ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Ապարանը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքներից է :

Ապարանը հնում կոչվել է Քասաղ :

Ապարանը կամ Քասաղը պատմական Հայաստանի Նիգ գավառի կենտրոնն էր՝ Գնթունյաց նախարարական տոհմի նստավայրը, որտեղ նրանք 4-րդ դարում կառուցել են մինչ այժմ կանգուն Քասաղի Բազիլիկ եկեղեցին :

Ապարանը իր պատմության ընթացքում ենթարկվել է բազմաթիվ փորձությունների :

Դրանցից ամենաճակատագրականը 1918թ թուրք զավթիչների հարձակումն էր, որը կասեցվեց բնակչությունից ստեղծված աշխարհազորի կողմից և այն ավարտվեց փառահեղ հաղթանակով : Բաշ-Ապարանի ճակատամարտը կարևոր դեր ունեցավ նաև Հայաստանի հետագա ճակատագրում: Ի պատիվ այդ ճակատամարտի փառահեղ հաղթանակի, յուրաքանչյուր տավա մայիսի 28-ին տոնվում է քաղաքի վերածննդի օրը :

Ճակատամարտի վայրում 1979թ կառուցել է «Վերածնունդ» հուշահամալիր :

Հուշահամալիրի տարածքում են գտնվում նաև Արցախյան հերոսամարտում զոհված Ապարանի քաջորդիների պանթեոնը և Ապարանի ճակատամարտի հրամանատար Ջորավար Դրոյի գերեզմանը:

Ապարանը գտնվում է ՀՀ կենտրոնական մասում, Քասաղ գետի ավազանի վերին հատվածում, Արագած լեռան և Ծաղկունյաց լեռնաշղթայի միջև, ծովի մակերևույթից 2050մ. բարձրության վրա:

Ապարանը Երևանից գտնվում է 55 կմ, մարզկենտրոն Աշտարակից՝ 35 կմ հեռավորության վրա:

Ապարանի միջով է անցնում միջպետական Մ 3 ավտոմայրուղին:

Ապարանում ձմեռը ցրտաշունչ է՝ հունվարի միջին ջերմաստիճանը կազմում է  $-10^{\circ}\text{C}$  է, նվազագույնը՝  $-30^{\circ}\text{C}$ , ամառը մեղմ է՝ միջին ջերմաստիճանը՝  $+17^{\circ}\text{C}$ , առավելագույնը՝  $+32^{\circ}\text{C}$  :

Տարեկան տեղումները կազմում են 550-650 մմ :

Տաք եղանակը տևում է 134 օր : Արևոտ օրերը՝ շուրջ 300 օր :

Ձմռանը տարածքը ծածկվում է ձյան հաստ շերտով՝ միջինը 100 սմ :

Քաղաքի միջով է հոսում Քասաղ գետը, որի ստորին հատվածում կառուցված է Ապարանի ջրամբարը՝ 8 կմ<sup>2</sup> մակերեսով, 90 մլն մ<sup>3</sup> ծավալով :

Ապարան քաղաքը զբաղեցնում է շուրջ 435 հա տարածք :

Քաղաքը կառուցված է տարբեր ռելեֆային հարթությունների վրա:

## 1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

h/h	Տվյալներ	քվաքանակ
1	Ընտանիքների /ծխերի / թիվը	2004
2	Համայնքի բնակչության թիվը	7067
	Այդ թվում՝	
-	Կանայք	3570
-	Տղամարդիկ	3497
3	Բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝	
-	0 – 6 տարեկան	597
-	7 – 17 տարեկան	802
-	18 – 65 տարեկան	4884
-	65 տարեկանից բարձր	784
4	Թոշակառուներ	1123
5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	25
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	1
7	Հայրենական Մեծ պատերազմի վետերաններ	6
8	Հաշմանդամներ	534
9	Զոհվածների ընտանիքների թիվը	17
10	Աշխատունակ բնակչություն	4400
11	Աշխատանքով ապահովված բնակչություն	1650
12	Գործազուրկի կարգավիճակ ունեցողներ	125
13	«Փարոս» համակարգում նպաստառու ընտանիքների թիվը	253

## 1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ

Համայնքի ավագանին կազմված է 11 անդամներից:

Քաղաքապետարանի աշխատակազմը բաղկացած է համայնքի ղեկավարի տեղակալից, աշխատակազմի քարտուղարից, ֆինանսատնտեսագիտական և ներքին աուդիտի բաժիններից, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնից, գլխավոր, առաջատար, կրտսեր մասնագետներից և տեխնիկական աշխատողներից:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքների թիվը 30 է:

Քաղաքապետարանի ենթակայության տակ գործում են 8 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, դրանք են՝

- Արվեստի դպրոց - 24 աշխատող
- Սարգսդպրոց - 14 աշխատող
- Մշակույթի կենտրոն - 15 աշխատող
- ՄՊՍ կենտրոն - 13 աշխատող
- Գրադարան - 9 աշխատող
- Թիվ 1 մանկապարտեզ - 11 աշխատող
- Թիվ 2 մանկապարտեզ - 11 աշխատող
- Կոմունալ ծառայություն – 14 աշխատող

#### 1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքում գործում են հետևյալ արտադրական ձեռնարկությունները՝

- «ՆԻԳ» ԲԲԸ  
Արտադրում է էլեկտրոնային միացման դետալներ: Աշխատում է իր հզորության 10% -ի չափով: Ունի 60 աշխատակից:
- Պանրագործարան  
Արտադրում է կաթնամթերք: Աշխատում է իր հզորության 30% - ի չափով:  
Ունի 30 աշխատակից:
- Հացաբուլկեղենի և հրուշակեղենի արտադրության «Գնթունիք» ՍՊԸ, ունի 100 աշխատակից
- Հացեղենի արտադրման ևս 3 ձեռնարկություն
- Եվրոպական տիպի դուռ-պատուհանի 3 արտադրամասեր
- Լիմոնադի արտադրության 2 ձեռնարկություն
- Կաթնամթերքի վերամշակման 2 ձեռնարկություն
- Գործում են նաև շուրջ 100 ԱԶ-եր, ՍՊԸ-եր, որոնցում աշխատում են 250 - 300 հոգի:

#### 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ: Այն ներկայացված է հավելված 2-ում:

Համայնքի սեփականություն համարվող շարժական գույքի մեծ մասը հիմնականում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության, հետևողական աշխատանքներ են տարվում դրանց նորացման ուղղությամբ::

Համայնքի ենթակառուցվածքների ընդհանուր վիճակը կարելի է գնահատել բավարար, ընթացքում դրանք հիմնականում ենթարկվել են ամբողջական կամ մասնակի վերանորոգման: Այսպես՝

- Համայնքային ենթակայության երկու մանկապարտեզները տեղակայված են հարմարեցված շինություններում, որոնք զուրկ են մանկապարտեզի համար բավարար նորմերից:

Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի տիպային շենքի կառուցումը, որի լուծումը ձգձգվում է:

- Քաղաքային գրադարանը տեղակայված է բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում, կարիք ունի հիմնանորոգման: Կա հնարավորություն այն նոր շենք տեղափոխելու:

- Մշակույթի կենտրոնը և ՄՊՍ կենտրոնը տեղակայված են նորակառույց շենքում:

- Արվեստի դպրոցը կարիք ունի վերանորոգման և երաժշտական գործիքներով ապահովման:

- Մարզադպրոցի շենքը 1950-ականների կառույց է, այն 2012 թ համայնքի և Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության համատեղ ուժերով ենթարկվել է մասնակի վերանորոգման, վերանորոգումը կշարունակվի նաև 2013 թ: Նոր մարզադպրոցի կառուցման նախագծային – նախահաշվային փաստաթղթերը պատրաստ են 2008 թ-ից, սակայն կառուցումը ձգձգվում է:

Մարզադպրոցը խիստ կարիք ունի մարզագույքի և սարքավորումների:

- Կոմունալ ծառայությունը տեղակայված է քաղաքապետարանի վարչական շենքի 1-ին հարկում, կարիք ունի օժանդակ շինությունների:

**Աղյուսակ 1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Յ/հ	Կառույցի անվանում	Հասցե	Կառուց. տարին	Մակերես /քմ/	Վիճակի գնահատում	Նորոգման կամ վերականգնման կարիք	Այլ նշում
1.	Քաղաքապետարանի վարչական շենք	Բաղրամյան-26	1971	2600	բավարար	վերանորոգման	
2.	Մշակույթի կենտրոն	Գ.Նժդեհի 4	2011	1200	Լավ	---	
3	ՄՊՍ կենտրոն	Գ. Նժդեհի 4	2011	800	Լավ	---	
4	Արվեստի դպրոց	Գ.Նժդեհի-12	1968	420	բավարար	վերանորոգման	
5	Մարզադպրոց	Գ.Նժդեհի 2/1	1954	600	բավարար	փոխարինման	
6	Գրադարան	Բաղրամյան 14	1986	480	բավարար	վերանորոգման	
7	Թիվ 1 մանկապարտեզ	Գայի 5	1980	300	անբավարար	վերանորոգման	
8	Թիվ 2 մանկապարտեզ	Բաղրամյան 26	1971	240	անբավարար	վերանորոգման	
9	Կոմունալ ծառայություն	Բաղրամյան 26	1971	50	բավարար	---	

**1.6 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում կան 26 բազմաբնակարան բնակելի շենքեր, 804 բնակարաններով, 53868 քմ ընդհանուր մակերեսով, որի բնակելի մակերեսը կազմում է 29000 քմ:

Համայնքում բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 243919 քմ է:

Համայնքի 26 բազմաբնակարան բնակելի շենքերից 11-ը՝ 303 բնակարաններով վթարային են, դրանցից երկուսը՝ Բաղրամյան 43 և Նժդեհի 7 շենքերը 4-րդ կարգի վթարային են և ենթակա քանդման:

Համայնքում կա մեկ կիսակառույց, որի միայն նկուղային հարկն է կառուցված:

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերը կառավարվում են 14 համատիրությունների և 12 լիազոր մարմինների միջոցով:

Համայնքում կան 1250 առանձնատներ, որոնցից 23-ը 3րդ և 4-րդ կարգի վթարային են, 120- ը՝ կիսակառույց:

Համայնքում բնակարանի կարիքավորների թիվը հասնում է շուրջ 250-ի:

**1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2815.8 հա, որից՝

- համայնքի սեփականություն համարվող հողերը կազմում են 1578, 87 հա

- բնակավայրի տարածքը կազմում է 434, 92 հա:

- բնակարանային ֆոնդի հողերը՝ 245 հա, արտադրական նշանակության հողերը՝ 31,89 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 2201,51 հա, գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողերը՝ 22,3 հա, հանգստի գոտու հողերը՝ 24.1 հա, ջրային ֆոնդի հողերը՝ 13.75 հա, հատուկ նշանակության հողերը՝ 4.23 հա, պետական ֆոնդի հողերը՝ 142,84 հա:

- հողի սեփականաշնորհմանը մասնակցել է 1141 ընտանիք:

Համայնքում մեկ հողաբաժնի չափը 0,39 հա է:

**1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում գյուղատնտեսության ճյուղերից են դաշտավարությունը և անասնապահությունը, որով զբաղվում է բնակչության մոտ 60%-ը:

Բնակչության սեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասերը կազմում են 241,35 հա, վարելահողերը՝ 701,66 հա, խոտհարքերը՝ 117,52 հա:

Տնամերձ հողամասերը, գյուղ. նշանակության հողամասերը և արոտավայրերը ոռոգելի չեն:

Քաղաքը երկու ուղղություններով ունի ոռոգման մայր ջրատարներ, սակայն չունի ներքաղաքային



համակարգ, որի հետևանքով չի իրականացվում լիարժեք ոռոգում:

Այդ պատճառով հողագործությունից չի ստացվում բավարար եկամուտ:

Ոռոգման համակարգի կառուցման ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ: Արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցման նախագծային փաստաթղթերը 2008 թ պատրաստ են, սակայն կառուցումը ձգձգվում է, այն պետք է կատարվի պետբյուջեի միջոցներով: Քաղաքապետարանի միջոցներով «Յայլա» և «Գռնով աղբյուր» կոչվող տարածքներում տեղադրվել են անասունների ջրման համար կիսախողովակներ:

Համայնքի դաշտամիջյան ճանապարհները ամեն տարի ձնհալից և սելավաջրերից քանդվում են և անընդհատ նորոգման խիստ կարիք ունեն:

Համայնքում կան 1431 գլուխ խոշոր և 581 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

Գյուղատնտեսական մթերքներից հիմնականում արտադրվում է կաթ, միս, կարտոֆիլ, ցորեն, գարի:

### 1.9. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՍՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի հողերը հիմնականում ենթարկվում են հողատարման և ողողման, որոշ տեղերում՝ նաև ճահճացման: Հողերի, ջրերի և շրջակա միջավայրի աղտոտման պատճառ են դառնում հիմնականում պոլիէթիլենային տոպրակները և տարաները:

Աղբահանությունը համայնքում իրականացվում է Կոմունալ ծառայության միջոցով:

Քաղաքում առկա 30 աղբատեղիներից, որոնցում տեղադրված են 110 աղբարկղեր, սիստեմատիկաբար կատարվում է աղբահանություն, աղբը տեղափոխվում է քաղաքային աղբավայր, որի վիճակը խիստ անմխիթար է՝ այն կառուցապատված չէ, չի համապատասխանում սահմանված նորմերին:

Համայնքում քիմիական կամ արդյունաբերական վնասակար արտանետումներ չկան:

Մեկ շնչի հաշվով կոշտ թափոնների քանակը հասնում է 1,7 խմ:

Բարելավվել է խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վիճակը:

2008թվականին համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ համայնքում կառուցվել է շուրջ 12կմ նոր ջրատար, հիմնանորոգվել է ՕԿՁ-2-ը, վերանորոգվել և նոր պոմպեր է տեղադրվել «Եզնակի» պոմպակայանում, վերանորոգվել է կապտաժը, բարեկարգվել տարածքը: Որոշակիորեն կրճատվել է ջրի կորուստները: Այդ ուղղությամբ դեռևս զգալի աշխատանքներ կան անելու:

Վերանորոգման կարիք ունեն ՕԿՁ-1-ը և սնուցող ներքին ցանցը:

Համայնքի մի շարք թաղամասերում չկա ջրահեռացման համակարգ: Որոշ թաղամասերում էլ խմելու ջրի և կոյուղու գծերը իրար մոտով են անցնում, ինչը կարող է սուր վարակիչ հիվանդությունների բռնկման առիթ դառնալ: Համայնքում քիչ են կանաչապատ տարածքները, ինչը պայմանավորված է ֆինանսական միջոցների սղղությամբ:

### 1.10. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԾԱՆԱՊԱՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 32 կմ է, մակերեսը՝ 250000 քմ:

Հիմնականում բարվոք վիճակում են Բաղրամյան, Զ. Դարյան և Գ.Նժդեհ փողոցները, իսկ մնացած փողոցները վերանորոգման և ասֆալտապատման խիստ կարիք ունեն:

Կան համայնքային ենթակայության 6 կանուղջներ, որոնք նույնպես վերանորոգման կարիք ունեն:

Համայնքի կապը մայրաքաղաքի և այլ քաղաքների հետ իրականացվում է երթուղային տաքսիների միջոցով: Համայնքի տարածքում գործում են 5 տաքսի ծառայություններ, որը բավարարում է բնակչության պահանջարկը:

Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշաններ տեղակայված են միայն Բաղրամյան փողոցի վրա: Բաղրամյան փողոցի վրա տեղակայված է երկու արագաչափ:

Անհրաժեշտություն կա լուսացույցների տեղադրման:

Բաղրամյան, Նժդեհի և Դարյան փողոցներում գործում են գիշերային լուսավորության համակարգ:

### 1.11 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի տարածքում գործում է 35 առևտրի, 6 հասարակական սննդի և 6 սպասարկման ոլորտի օբյեկտներ, բենզինի և գազի լիցքավորման 2-ական լցակայաններ, բանկային 3 կառույցներ, հեռախոսային 3 օպերատորներ,

Չկան խաղատներ, գվարճանքի ու շահումով խաղերի օբյեկտներ, քաղաքային բաղնիք ու սաունա: Գործում է փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցության կենտրոն, որը օժանդակում է փոքր ու միջին բիզնեսի ներդրմանը:

### 1.12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 3 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում են 845 աշակերտ, աշխատում են 150 մարդ: Թիվ 2 հիմնական և ավագ դպրոցների շենքերը վերանորոգված են, թիվ 1 հիմնական դպրոցի նորոգումը կսկսվի 2013 թ-ից: Երեք դպրոցներն էլ ունեն ջեռուցման համակարգ:

Համայնքի երկու մանկապարտեզները՝ որոնք տեղակայված են հարմարեցված շենքերում, ունեն 3-ական խմբեր, յուրաքանչյուրում հաճախում են 70 - 90 երեխաներ, աշխատում են 22 մարդ: Երեխաների ընդգրկվածությունը կազմում է պահանջարկի 60 %:

Համայնքը կարիք ունի տիպային մանկապարտեզի շենքի կառուցման, որի ուղղությամբ տարվում են հետևողական աշխատանքներ:

Համայնքում գործում է ժամանակակից ամենաբարձր չափանիշներով կառուցված և կահավորված բժշկական կենտրոն, որը սպասարկում է 60 մահճակալ, ունի 170 աշխատող, որից 25-ը բժիշկներ են:

### 1.13. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Համայնքի արվեստի դպրոցում սովորում են 152 երեխաներ, գործում են 2 բաժիններ՝ երաժշտական և կերպարվեստի, գործում են 11 խմբեր, աշխատում են 24 հոգի:

Դպրոցի շենքի 2-րդ հարկը ջեռուցվում է, շենքը կարիք ունի վերանորոգման, գույքի նորացման: Մշակույթի տանը գործում է 5 խումբ, հաճախում են 100 երեխաներ, աշխատում՝ 15 մարդ: Շենքը նորակառույց է, հիմնականում ապահովված է անհրաժեշտ գույքով:

Քաղաքային գրադարանը գտնվում է բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում, այն կարիք ունի վերանորոգման: Գրադարանն ունի 9 աշխատող, 70000 կտոր գրականություն, 1200 ընթերցող, զգացվում է մանկական գրականության պակաս:

Մարզադպրոցում գործում է 6 մարզաձևի 9 խումբ, մարզվում են 120 երեխաներ, ունի 14 աշխատողներ: Մարզադպրոցի շենքը 1960-ականների կառույց է, 2012 թ ենթարկվել է մասնակի նորոգման, զուրկ է ջեռուցման համակարգից, անհրաժեշտ մարզական գույքից:

Անհրաժեշտություն կա տիպային նոր մարզադպրոցի շենքի կառուցման, մարզական գույք ձեռք բերման: Անմխիթար վիճակում է մաս քաղաքային մարզադաշտը, որը չունի հանդերձարան, բուժ կետ, սան հանգույց, լողասենյակ, հանգստի սենյակներ:

Համայնքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն են հաճախում 85 երեխաներ, գործում են 8 խմբեր, աշխատում են 13 հոգի: Շենքը նորակառույց է, ապահովված է նոր գույքով:

#### 1.14. ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՅՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի տարածքում կան՝ 1 զբոսայգի, որը կառուցապատված չի, 3 հանգստյան գոտի, 6 խաղահրապարակ, 20 բակային տարածքներ:

Քաղաքային զբոսայգին և Տ. Պետրոսյանի անվան հանգստյան գոտիները կարիք ունեն բարեկարգման և կառուցապատման: «Վերածնունդ» հուշահամալիրի և «Գոգոյան աղբյուրի» հանգստյան գոտիները վերանորոգվել և կառուցապատվել են:

Բազմաբնակարան բնակելի շենքերի բակերը կարիք ունեն ասֆալտապատման, կառուցապատման և բնակիչների հանգստի ու երեխաների խաղերի համար անհրաժեշտ սարքավորումների տեղադրման:

#### 1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապարանը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, միջպետական ավտոմայրուղու վրա, որը հնարավորություն է տալիս մշտական կապ ունենալ հանրապետության մյուս խոշոր քաղաքների հետ: Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 35կմ, իսկ մայրաքաղաքից 55կմ հեռավորության վրա: Որպես տարածաշրջանային կենտրոն համայնքի վարչական տարածքում են տեղակայված ՀՀ պետական կառավարման մարմինների ճյուղային ստորաբաժանումներ:

Համայնքն ունի հեռուստակայան և տեղական հեռուստաալիք:

Համայնքում գործող հեռախոսային կապի 3 օպերատորները, բանկային 3 և վարկավորման 2 մասնաճյուղերը, տրանսպորտային միջոցների բավարար առկայությունը, սպասարկման, սննդի և առևտրի օբյեկտները բավարարում են բնակչության պահանջները:

Համայնքը 80 % -ով զազաֆիկացված է:

Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը թույլ կտա աստիճանաբար հասնել այն բանին, որ մոտ ապագայում համայնքի շուրջ 50 % - ն ունենա շուրջօրյա, իսկ մնացած մասը՝ 16 ժամյա ջրամատակարարում:

Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի բազմաթիվ տեսարժան վայրեր, հուշարձաններ, սառնորակ աղբյուրներ, մաքուր օդ, ինչը հնարավորություն է տալիս խթանելու տուրիզմի զարգացմանը:

#### 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքում կան բազում հիմնահարցեր, որոնց լուծումը հիմնականում ֆինանսական միջոցների խնդիր է: Համայնքի ֆինանսական հնարավորությունները սուղ են, որի միջոցով անհնարին է ինքնուրույն լուծել համայնքի առջև ծառայած բազմաթիվ խնդիրները:

Եթե խմելու ջրի ներհամայնքային համակարգի բարելավման ծրագիրը շարունակական բնույթ է կրում, ապա կեղտաջրերի հեռացման համակարգը խիստ թերի է և լուրջ ներդրումների կարիք ունի: Կան թաղամասեր, որոնցում ջրահեռացումը կատարվում է բացօթյա, որը հակասանիտարական իրավիճակ է ստեղծում: «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ իր կառավարման 15 տարիների ընթացքում այդ ոլորտում ներդրումներ չի իրականացրել:

Բնակչության բարեկեցության բարձրացմանը խոչընդոտում է նաև ոռոգման ջրի ներքին ցանցի բացակայությունը, որի կառուցման համար լուրջ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ: Հիմնովին չի լուծվել համայնքի փողոցների գիշերային լուսավորության հարցը: Անհրաժեշտ է ավելացնել կանաչ տարածքները: Բազմաբնակարան բնակելի շենքերի բակերը պետք է

նորոգել և ասֆալտապատել, ավելացնել մանկական խաղահրապարակների քանակը: Ստեղծել հանգստի գոտիներ: Ամբավարար է ներհամայնքային ճանապարհների, փողոցների վիճակը, որոնք նորոգման և ասֆալտապատման խիստ կարիք ունեն:

Խիստ այժմեական խնդիր է աշխատատեղերի ստեղծումը, եղած արտադրական կարողությունների հնարավորությունների արդյունավետ օգտագործումը:

Բնակչության մոտ 15 - 20 %-ն աղքատներ են և ընդգրկված են աղքատության նպաստի համակարգում: 1988 թվականի դեկտեմբերի երկրաշարժի պատճառով տուժել է քաղաքի բնակարանային ֆոնդը, հյուրանոցային համալիրը, մանկապարտեզը:

Գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար չկան համապատասխան տեխնիկաներ, ամարդյունավետ է օգտագործվում հողը:

### 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքապետարանը մշտապես կատարում և գերակատարում է համայնքի բյուջեն, որը թույլ է տալիս հաջորդ չորս տարիների ընթացքում տեղական բյուջեի հաշվին մի շարք խնդիրներ լուծել, ապահովել համայնքի բնականոն կենսապահովումը:

ՀՀ Կառավարության կողմից տարեց տարի ավելացվում են դոտացիոն գումարները, մշակվում է դոտացիաների հատկացման նոր մեխանիզմ, որը կավելացնի համայնքին տրվող դոտացիան:

Նոր աշխատատեղերի ստեղծմանը կնպաստի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը, որը հնարավոր կլինի ցածր տոկոսով բանկային վարկավորման պարագայում:

### 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի համար վտանգ սպառնացող խնդիրներից են հիմնականում բազմաբնակարան բնակելի շենքերի և առնձնատների վթարայնությունը, սելավատարների անմխիթար վիճակը, խմելու ջրի ներքին ցանցի որոշ հատվածների քայքայված լինելը, ջրահեռացման համակարգի անմխիթար վիճակը, բնակչության հարկային պարտավորությունների կատարման վատ վիճակը:

## 2. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքում 2013-2016 թվականներին նախատեսվում է իրականացնել կապիտալ 23 ծրագրեր, որոնց մի մասը պետության կողմից հանրապետական և մարզային ծրագրերով է նախատեսված, մի մասը միջազգային կազմակերպությունների, մի մասն էլ՝ համայնքային:

Այդ ծրագրերը իրենց մեջ ներառում են համայնքի տարբեր ոլորտներ ընդգրկող բազում հիմնահարցեր՝ նախադպրոցական հիմնարկներից սկսած մինչև կրթական համակարգ, առողջապահությունից մինչև ֆիզիկական կուլտուրա և սպորտ, առևտրից մինչև փոքր ու միջին ձեռնարկատիրություն, գյուղատնտեսությունից մինչև քաղաքաշինություն:

Այդ ծրագրերի իրականացումը կնպաստի համայնքի զարգացմանը, բնակչության սոցիալ-կենցաղային բնույթի մի շարք հարցերի, մշակութային ու հանգստի պայմանների լուծմանը, համայնքի բնակչության կյանքի պայմանների ու ապրելակերպի բարելավմանը:

Համայնքում իրականացվող ծրագրերը ներկայացված են աղյուսակ 3-ում:

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

#### 3.1 ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության կյանքի պայմանները, հոգատարություն հանդես բերել նրանց սոցիալ-տնտեսական, կուլուրալ- կենցաղային, մշակութային և հանգստի պայմանների բարելավմանը, նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը և ազատ աշխատուժի զբաղվածության ապահովմանը, հետևողականություն դրսևորել արտագաղթի նվազեցման, աղքատության մակարդակի հաղթահարման գործում:

Այդ ամենի իրականացման գործում մոբիլիզացնել համայնքի ուժերը, բնակչությանը ներգրավել համայնքային խնդիրների լուծման մեջ, ամենուր ապահովել հրապարակայնություն և բնակչության համար համայնքը դարձնել գրավիչ ու արժանապատիվ ապրելակերպի բնակավայր:

#### 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Համայնքի կենսագործունեության բոլոր օղակների դինամիկ զարգացման ապահովում
2. Համայնքի ֆինանսական վիճակի բարելավում՝ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման, հողի հարկի և գույքահարկի տվյալների շտեմարանների, տեղական տուրքերի տուրքերի և վճարների, համայնքային ծառայությունների մատուցման վարձավճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականության իրականացում, ձեռներեցության և համայնքային տնտեսության զարգացում:
3. Բյուջետային միջոցների Նպատակային և արդյունավետ օգտագործում՝ բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակի ու որակի բարձրացման, քաղաքապետարանի և ՀՈԱԿ- երի աշխատանքի արդյունավետության ու թափանցիկության ապահովման ճանապարհներով
4. Կրթական, մշակութային և սպորտային համայնքային ենթակառուցվածքների պահպանման, կառուցման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքների իրականացում:
5. Մշակութային, մարզական և հասարակական կյանքի աշխուժացում, հատուկ ուշադրություն և հոգացություն երիտասարդության հանգստի կազմակերպման աշխատանքների նկատմամբ, զբոսայգիների և հանգստյան գոտիների կառուցապատման ապահովում:
6. Հանրակրթական ուսումնական հաստատությունների, բժշկական կենտրոնի, համայնքի կյանքում դերակատարում ունեցող բոլոր կազմակերպությունների աշխատանքների բարելավում:
7. Կապիտալ ներդրումներ բնակարանային – կոմունալ տնտեսության ոլորտում, ծառայությունների, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կանոնակարգում, էական բարելավումներ ներքաղաքային ճանապարհների և բակային տարածքների բարեկարգման, գիշերային լուսավորության վերականգնման, խմելու ջրի շուրջօրյան ռեժիմի ապահովման, ջրահեռացման համակարգերի կառուցման, սելաֆատարների և հեղեղատների հիմնանորոգման, թաղամասերի գազաֆիկացման և այլ ոլորտներում:
8. Նպաստել գյուղատնտեսության զարգացմանը, հողօգտագործողներին ապահովել գյուղ. տեխնիկայով, էլիտար սերմացուներով, պարարտանյութերով, դեղամիջոցներով ու թունաքիմիկատներով, վերանորոգել դաշտամիջյան ճանապարհները, կառուցել ոռոգման ներքին համակարգ:

9. Օժանդակել արդյունաբերական ձեռնարկությունների, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, խթանել աշխատատեղերի ստեղծմանը:

10. Սոցիալական տարաբնույթ ծրագրերի իրականացում, նպաստում պատերազմի վետերանների, ծերերի, զոհվածների ընտանիքների, հաշմանդամների կյանքի պայմանների բարելավմանը, նրանց հոգսերի ու խնդիրների լուծման նկատմամբ հոգատարության ցուցաբերում:

11. Օրենքների և կարգուկանոնի գերակայության ապահովում, սոցիալական արդարության սկզբունքների ամրապնդում, քաղաքացիների հոգսերի նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում:

#### **4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)**

Զարգացման քառամյա ծրագիրն առաջին հերթին իրենից ներկայացնում է համայնքի կենսագործունեության բոլոր ոլորտներում փաստացի իրավիճակը և վերլուծության շնորհիվ ի հայտ է բերում այն խնդիրների ու հիմնահարցերի համալիր լուծումը, որոնք կնպաստեն համայնքում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ամրապնդմանը, տնտեսական, ֆինանսական, կենցաղային, քաղաքաշինական, բնակարանային - կոմունալ տնտեսության, աշխատանքի և սոցիալական ապահովության, կրթության, առողջապահության, սպորտի, մշակույթի և այլ ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրմանն ու կատարմանը: Այդ ամենն առաջին հերթին պետք է նպաստեն բնակչության կյանքի պայմանների բարելավման, սոցիալական պրոբլեմների հաղթահարման, արտագաղթի դադարեցման, աղքատության նվազեցման, համայնքի կենսագործունեության բոլոր օղակների դիմամիկ զարգացման ապահովմանը: Ստորև ներկայացվում է 2013 – 2016 թվականների ընթացքում համայնքում նախատեսվող ծրագրերի ցանկը`

2012 – 2016 ԹԹ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐ

N	Ծրագրի անվանումը
1	Ջալալյան, Փոշտեր, Լուսավորիչ թաղամասերի գազաֆիկացում
2	Թիվ 1 դպրոցի վերանորոգում
3	Արվեստի դպրոցի վերանորոգում
4	Մարզադպրոցի շենքի հիմնանորոգում, / հնարավոր է նաև՝ նորի կառուցում/
5	Մարզադաշտի կառուցապատում
6	Մանկապարտեզի կառուցում
7	Բազմաբնակարանային 7 շենքերի տանիքների հիմնանորոգում
8	Բաղրամյան 43 վթարային շենքի ապամոնտաժում և տեղում նորի կառուցում
9	Բազմաբնակարանային 7 բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում
10	Բաղրամյան և Նժդեհի փողոցների մայթերի ասֆալտապատում, եզրաքարերի և պատերի նորացում
11	Ներքաղաքային 3 կմ ճանապարհների ասֆալտապատում
12	Ներքաղաքային ասֆալտապատ փողոցների փոսային նորոգումներ
13	Ներքաղաքային 6 կմ գրունտային ճանապարհների նորոգում և բարեկարգում
14	Թաղամասերում կոյուղագծերի կառուցում
15	Գիշերային լուսավորության վերականգնում Գայի, Մ.Գևորգի, Ծաղկունյաց և Պ.Սևակի փողոցներում
16	Գերեզմանատների պարսպապատում
17	Զբոսայգու կառուցապատում
18	Տ. Պետրոսյանի անվան հանգստյան գոտու կառուցապատում
19	Յուզադյուրի վերակառուցում
20	Մանկական 6 խաղահրապարակների կառուցում
21	Դաշտամիջյան ճանապարհների նորոգում
22	Մեքենա - սարքավորումների ձեռք բերում
23	ԲՈՒՅ կամ քոլեջ – ուսումնարանի հիմնում

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Հ/հ	Մուտքերի անվանումը	2011թ. փաստ.	2012թ. փաստ.	2013թ. կանխ.	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ` ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	<b>144292.4</b>	<b>147079.7</b>	<b>174747.1</b>	<b>181616.7</b>	<b>185843.4</b>	<b>193587.1</b>
I.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*</b>	<b>123220.5</b>	<b>127831.6</b>	<b>144900.0</b>	<b>150116.7</b>	<b>156843.4</b>	<b>163587.1</b>
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	<b>25600.0</b>	<b>24700.0</b>	<b>24900.0</b>	<b>25800.0</b>	<b>26700</b>	<b>27900.0</b>
1.1	<b>Գույքային հարկեր անշարժ գույքից</b>	<b>12000.0</b>	<b>11500.0</b>	<b>11500.0</b>	<b>11800.0</b>	<b>12000.0</b>	<b>12500.0</b>
ա	<b>Գույքահարկ շենքերի և շինությունների համար</b>	<b>3500.0</b>	<b>3500.0</b>	<b>3000.0</b>	<b>3200.0</b>	<b>3200.0</b>	<b>3500.0</b>
բ	<b>Չողի հարկ</b>	<b>8500.0</b>	<b>7500.0</b>	<b>8500.0</b>	<b>8600.0</b>	<b>8800.0</b>	<b>9000.0</b>
1.2	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	<b>5700.0</b>	<b>6000.0</b>	<b>8000.0</b>	<b>8200.0</b>	<b>8500.0</b>	<b>8800.0</b>
	<b>Գույքահարկ փոխադրամիջոցների համար</b>	<b>5700.0</b>	<b>6000.0</b>	<b>8000.0</b>	<b>8200.0</b>	<b>8500.0</b>	<b>8800.0</b>
1.3	<b>Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	<b>3100.0</b>	<b>3200.0</b>	<b>2800.0</b>	<b>3000.0</b>	<b>3200.0</b>	<b>3400.0</b>
1.4	<b>Տեղական տուրքեր</b>	<b>3100.0</b>	<b>3200.0</b>	<b>2800.0</b>	<b>3000.0</b>	<b>3200.0</b>	<b>3400.0</b>
1.5	<b>Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ</b>	<b>4800.0</b>	<b>4000.0</b>	<b>2600.0</b>	<b>2800.0</b>	<b>3000.0</b>	<b>3200.0</b>
1.6	<b>Պետական տուրքեր</b>	<b>4800.0</b>	<b>4000.0</b>	<b>2600.0</b>	<b>2800.0</b>	<b>3000.0</b>	<b>3200.0</b>
1.7	<b>Այլ հարկային եկամուտներ</b>	-	-	-	-	-	-
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	<b>83095.3</b>	<b>88306.4</b>	<b>97726.2</b>	<b>101762.4</b>	<b>106756.4</b>	<b>112000.1</b>
2.1	<b>Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհ</b>	-	-	-	-	-	-
2.2	<b>Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհ</b>	-	-	-	-	-	-
2.3	<b>Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>83095.3</b>	<b>86306.4</b>	<b>97006.2</b>	<b>101762.4</b>	<b>106756.4</b>	<b>112000.1</b>
ա)	<b>Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ</b>	<b>81108.1</b>	<b>84319.2</b>	<b>95124.3</b>	<b>99880.5</b>	<b>104874.5</b>	<b>110118.2</b>
բ)	<b>Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)</b>	<b>1987.2</b>	<b>1987.2</b>	<b>1881.9</b>	<b>1881.9</b>	<b>1881.9</b>	<b>1881.9</b>
2.4	<b>Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	-	<b>2000.0</b>	<b>720.0</b>	-	-	-
ա	<b>Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)</b>	-	<b>2000.0</b>	<b>720.0</b>	-	-	-
3.	<b>ԱՅԼ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ*</b>	<b>14525.2</b>	<b>14825.2</b>	<b>22273.8</b>	<b>22554.3</b>	<b>23387.0</b>	<b>23687.0</b>
3.1	<b>Տոկոսներ</b>	-	-	-	-	-	-
3.2	<b>Շահաբաժիններ</b>	-	-	-	-	-	-
3.3	<b>Գույքի վարձակալությունից եկամուտներ</b>	<b>4000.0</b>	<b>4400.0</b>	<b>3400.0</b>	<b>3500.0</b>	<b>3700.0</b>	<b>3800.0</b>
ա	<b>Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ</b>	<b>800.0</b>	<b>700.0</b>	<b>800.0</b>	<b>800.0</b>	<b>900.0</b>	<b>900.0</b>
բ	<b>Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց զանձվող վարձավճարներ</b>	<b>1300.0</b>	<b>1500.0</b>	<b>1100.0</b>	<b>1100.0</b>	<b>1200.0</b>	<b>1200.0</b>
	<b>Այլ գույքի վարձակալությունից մուտքեր</b>	<b>1900.0</b>	<b>2200.0</b>	<b>1500.0</b>	<b>1600.0</b>	<b>1600.0</b>	<b>1700.0</b>
3.4	<b>Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում</b>	<b>3125.2</b>	<b>2525.2</b>	<b>10654.3</b>	<b>10654.3</b>	<b>10787.0</b>	<b>10787.0</b>
ա	<b>Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ</b>	<b>3125.2</b>	<b>2525.2</b>	<b>2654.3</b>	<b>2654.3</b>	<b>2787.0</b>	<b>2787.0</b>
3.5	<b>Վարչական գանձումներ</b>	<b>6800.0</b>	<b>7400.0</b>	<b>8219.5</b>	<b>8400.0</b>	<b>8900.0</b>	<b>9100.0</b>
	<b>Տեղական վճարներ</b>	<b>700.0</b>	<b>700.0</b>	<b>419.5</b>	<b>500.0</b>	<b>600.0</b>	<b>600.0</b>
ա	<b>Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ</b>	<b>600.0</b>	<b>700.0</b>	<b>700.0</b>	<b>800.0</b>	<b>800.0</b>	<b>800.0</b>
բ	<b>Օրենքով համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (զանձվող) վճարներ</b>	<b>5500.0</b>	<b>6000.0</b>	<b>6500.0</b>	<b>6500.0</b>	<b>6800.0</b>	<b>7000.0</b>
3.6	<b>Մուտքեր տույժերից, տուգանքներից</b>	<b>600.0</b>	<b>500.0</b>	<b>600.0</b>	<b>600.0</b>	<b>700.0</b>	<b>700.0</b>



ա	Վարչական իրավախախտումների համար ՏԻՍ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	600.0	500.0	600.0	600.0	700.0	700.0
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ						
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ						
II.	<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)</b>	<b>11000.0</b>	<b>15000.0</b>	<b>20000.0</b>	<b>20000.0</b>	<b>20000.0</b>	<b>20000.0</b>
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-	10000.0	16000.0	1000.0	-	-
ա	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-	10000.0	16000.0	-	-	-
բ	Շարժական գույքի իրացումից մուտքեր	-	-	-	700.0	-	-
գ	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-	-	-			
2.	Պաշարների իրացումից մուտքեր	-	-	-			
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	-	-	-			
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	11000.0	5000.0	4000.0	19000.0	20000.0	20000.0
	Հողի իրացումից մուտքեր	11000.0	5000.0	4000.0	19000.0	20000.0	20000.0
III.	<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ՂԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ</b>	<b>10071.9</b>	<b>4248.1</b>	<b>9847.1</b>	<b>11500.0</b>	<b>9000.0</b>	<b>10000.0</b>
Ա.	<b>ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)</b>						
1.	<b>ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ</b>						
1.1	Վարկեր	-	-	-	-	-	-
ա	-վարկերի ստացում	-	-	-	-	-	-
բ	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	-	-	-	-	-	-
2.	<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>						
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	10071.9	4248.1	9847.1	11500.0	9000.0	10000.0
Բ.	<b>ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</b>						
1.	<b>ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ</b>						

## 6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

### Ծրագիր – 1. ՋԱԼԱԼՅԱՆ, ՓՈՇՏԵՐ, ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԹԱՂԱՍԱՍԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 24, 0 մլն. դրամ

#### Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի Ջալալյան, Փոշտեր և Գ.Լուսավորիչ նորակառույց և ծայրամասային թաղամասերում գազաֆիկացումը խիստ անհրաժեշտ է:

Անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստ են 2008 թ-ից:

Խնդրի լուծումը ներկայացված է գյուղատնտեսական ենթակառույցների զարգացման ԻՖԱՏ ծրագրին

#### Ծրագրի խնդիրները.

1. Անհրաժեշտ աշխատանքներ տանել ծրագիրը ԻՖԱՏ կազմակերպության 2013 թ ծրագրում ընդգրկելու ուղղությամբ:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.04.2013թ.

2. Ավագանու հաստատմանը ներկայացնել ծրագրի կատարման համար համայնքի ներդրումն հատկացնելու հարցը:

Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ, ժամկետ՝ 03 - 04 / .2013թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 թվական

#### Ծրագրի ակնկալվող արդյունքները.

1. Համայնքի ծայրամասային թաղամասերը կունենա գազամատակարարման համակարգ:

2. Համայնքի բնակարանների շուրջ 90 %-ը կգազաֆիկացվի:

### Ծրագիր – 2. ԹԻՎ 1 ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ.

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 210, 0 մլն. դրամ

#### Ծրագրի հիմնավորումը.

Դպրոցի շենքը 1988 թ երկրաշարժի հետևանքով վթարվել է և մինչև օրս չի վերանորոգվել, ներկայումս խիստ կարիք ունի վերանորոգման:

Անբարեկարգ վիճակի պատճառով երեխաները հեռանում են դպրոցից:

Դպրոցի ջեռուցման համակարգը վերականգնվել է 2007 թվականին: Սակայն լիարժեք

տաքություն հնարավոր չէ ապահովել, քանի որ վթարային վիճակում են դուռ-պատուհանները, տանիքը, հատակները, ներքին հարդարումը:

#### Ծրագրի խնդիրները.

1. Նպաստել համայնքի թիվ 1 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքները 2013-2015 թթ ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի ցանկում ընդգրկելու համար:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.01.2013թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2015 թվականներ

#### Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Ունենալ բարենորոգված, բարետես և հարմարավետ դպրոց, որտեղ երեխաների ուսուցման ու դաստիարակության կազմակերպման համար կստեղծվեն բարենպաստ պայմաններ:

### Ծրագիր – 3. ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 35, 0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի արվեստի դպրոցի շենքը 1968 թվականի կառույց է: Շենքն ունի կապիտալ վերանորոգման կարիք: Վթարային վիճակում են գտնվում տանիքը, պատուհանները, սան. հանգույցները, հատակները, ռաջին հարկում բացակայում է ջեռուցման համակարգ, անբարեկարգ վիճակում է շրջակայքը:

Ծրագրի խնդիրները.

1. Կազմել շենքի վերանորոգման նախահաշվային փաստաթղթեր  
Պատասխանատու՝ Քաղաքաշինության բաժին: Ժամկետ՝ մինչև 01.04.2013թ.
2. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել արվեստի դպրոցի շենքի վերանորոգումը 2013-2015 թթ միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցով իրականացնելու համար:  
Պատասխանատու՝ քաղաքապետ: Ժամկետ՝ մինչև 31.12.2013թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2015 թվականներին

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Ծրագրի ավարտից հետո ունենալ բարեկարգված արվեստի դպրոց, որը կունենա պարսպապատված տարածք, նորոգված և կահավորված դասասենյակներ, ինչը թույլ կտա ավելացնելու խմբերի ու աշակերտների քանակը, նպաստելու երեխաների գեղագիտական դաստիարակության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, ստեղծել աշխատանքային նորմալ պայմաններ:

### Ծրագիր – 4. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ / ՀԱՎՐԱՎՈՐ Է ՆԱԵՎ ՆՈՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ/

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 8,0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի մարզադպրոցի շենքը 1950-ականների կառույց է, հարմարեցված շենք է, չունի ջեռուցման համակարգի, հանդերձարաններ, սան հանգույցի, մարզական անհրաժեշտ գույք և համապատասխան դահլիճների: Նման շենքային պայմաններում հնարավոր չէ անցկացնել սպորտային միջոցառումներ և բավարար մակարդակի մարզական պարապմունքներ: 2012 թ շենքը մասնակի վերանորոգվել է՝ համայնքի և միջազգային Վորլդ Վիժն կազմակերպության միջոցով, վերանորոգումը կշարունակվի 2013 թ: 2007թ քաղշին նախարարության կողմից պատրաստվել է նոր մարզադպրոց կառուցելու համար անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, սակայն պետբյուջեով դեռևս միջոցներ չի հատկացվում և նոր մարզադպրոցի կառուցումը ձգձգվում է:

Ծրագրի խնդիրները.

1. Կազմել շենքի վերանորոգման նախահաշվային փաստաթղթեր  
Պատասխանատու՝ Քաղաքաշինության բաժին: Ժամկետ՝ մինչև 01.04.2013թ.
2. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել մարզադպրոցի ամբողջական նորոգումը 2013 թ. համայնքային բյուջեի և միջազգային Վորլդ Վիժն կազմակերպության միջոցով կատարելու համար:  
Պատասխանատու՝ քաղաքապետ, Ժամկետ՝ մինչև 01.09.2013թ.
3. Համապատասխան աշխատանքներ տանել նոր մարզադպրոցի կառուցումը ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի ցանկում ընդգրկելու համար:  
Պատասխանատու՝ քաղաքապետ, Ժամկետ՝ 2013 - 2014 – 2015 թթ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Համայնքում ունենալ վերանորոգված և հարմարավետ մարզադպրոց, որոնցում զգալիորեն կավելանան մարզվող երեխաների թիվը, կբարձրանա մարզման որակը, այն կնպաստի բնակչության, և հատկապես, երեխաների հանգստի ու առողջ ապրելակերպի զարգացմանը, սպորտի մասսայականության ապահովմանը:

## Ծրագիր – 5. ՄԱՐՁԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. – 30,0 մլն. դրամ

### Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի մարզադաշտը կարիք ունի կառուցապատման, նրանում չկան հանդերձարաններ, սանհանգույցներ, նստարեղիներ:

Նման պայմաններում անարդյունավետ են անցկացվում մարզական պարապմունքները, պրոբլեմներ են ստեղծվում հանրապետական մրցաշարերում ընդգրկված մարզադպրոցի ֆուտբոլի թիմերի պաշտոնական հանդիպումների կազմակերպման գործում:

### Ծրագրի խնդիրները.

1. Կազմել մարզադաշտի վերանորոգման նախահաշվային փաստաթղթեր  
Պատասխանատու՝ Քաղաքաշինության բաժին: Ժամկետ՝ մինչև 01.06.2013թ.
2. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել մարզադաշտի կառուցապատումը 2013 թվականին  
ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ կազմակերպության միջոցով կատարելու համար:  
Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.11.2013 թ

Ծրագրի իրականացման ժամանակը՝ մինչև 01.11.2013 թ

### Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Համայնքում ունենալ կառուցապատված, վերանորոգված և հարմարավետ մարզադաշտ, որոնցում զգալիորեն կավելանան մարզվող երեխաների թիվը, կբարձրանա մարզման որակը, այն կնպաստի բնակչության, և հատկապես, երեխաների հանգստի ու առողջ ապրելակերպի զարգացմանը, սպորտի մասսայականացմանը:

## Ծրագիր – 6. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. - 300.0 մլն. դրամ

### Ծրագրի հիմնավորումը.

Համայնքային ենթակայության երկու մանկապարտեզները տեղակայված են հարմարեցված շենքերում, որոնց պայմանները թույլ չեն տալիս կազմակերպել երեխաների հանգստի, դաստիարակության ու խաղերի նորմալ պրոցես: Չկան հանդեսների դահլիճ, մսուրային և ավագ տարիքի երեխաների տարանջատված խաղասենյակներ ու ննջարաններ, սանիտարական նորմերին համապատասխանող խոհանոց ու ճաշասենյակներ, բակային տարածք անհրաժեշտ խաղահրապարակներով: Եղած պայմանները հնարավորություն չեն տալիս անհրաժեշտ պահանջարկի թվով երեժաներ ընդգրկել մանկապարտեզներում:

Խիստ կարիք կա նոր տիպային մանկապարտեզի շենքի կառուցման

### Ծրագրի խնդիրները.

1. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել մանկապարտեզի շենքի կառուցումը 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի ցանկում ընդգրկելու, կամ համահայկական հմինադրամի միջոցով իրականացնելու համար:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 31.12.2013թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2014 – 2015 թվականներ

### Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Ունենալ նորակառույց տիպային մանկապարտեզի շենք, որտեղ կտեղավորվեն համայնքի երկու մանկապարտեզները, կուներենա և մսուրային տարիքի, և ավագ տարիքի երեխաների խմբեր: Այն կբավարարի համայնքում առկա պահանջարկի կարիքները:

## Ծրագիր –7. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. - 60.0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքն կան 26 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից 15 տանիքները վերանորոգված են: Անհրաժեշտություն է առաջացել վերանորոգելու և առաջնահերթ վթարայնություն ունեցող և 7՝ Բաղրամյան 8, 22, 23, 49, Նժդեհի 3, 10, 13 բնակելի շենքերի տանիքները:

Ծրագրի խնդիրները.

1. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները 2013-2014-2015-2016 թվականների ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի ցանկում ընդգրկելու համար:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ ընթացքում

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 -2014 – 2015-2016 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների ավարտից հետո պաշտպանել վերջին հարկերը անձրևաջրերի կաթոցներից, որն էլ կնպաստի շենքերի վթարայնության խորացման կանխմանը:

## Ծրագիր –8. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. - 500.0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի 26 բազմաբնակարանային բնակելի շենքերից 2-ը՝ Բաղրամյան 43 և Նժդեհի 7 շենքերն ունեն 4 – որ կարգի, 9 շենքերը՝ 3 – որ, 15-ը՝ 2-որ կարգի վթարայնություն:

Բաղրամյան 43 բնակելի շենքի վիճակը խիստ անմխիթար է և վտանգավոր բնակության համար:

Ծանրաքաշ մեքենաների շարժից ամբողջ շենքը շարժվում է, որի պատճառով երեխաները վախենում և տներից դուրս են փախչում:

ՀՀ կառավարությունում, Արագածոտնի մարզպետարանում անցկացված բազմաթիվ քննարկումներից հետո, հաշվի առնելով խնդրի կարևորությունը, որոշվել է նշված շենքի փոխարեն նույն տեղում կառուցելու նոր շենք: Ծրագիրն ընդգրկված է եղել նաև ՀՀ Նախագահի 2008 թ նախընտրական խոստումներում, սակայն իրականացումը ձգձգվում է:

Ծրագրի խնդիրները.

1. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել Բաղրամյան թիվ 43 քանդվող շենքի փոխարեն նոր բազմաբնակարան բնակելի շենքի կառուցումը 2014 - 2015 թվականներին ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի ցանկում ընդգրկելու համար:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.11.2013թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2014 – 2015 – 2016 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Նոր բնակելի շենքի կառուցումով նախականիվել վթարային շենքի հնարավոր փլուզման վտանգը, լուծել բնակչության անվտանգ բնակության խնդիրը, թվով 31 ընտանիքներին ապահովել բնակարանային նորմալ պայմաններով:

## Ծրագիր – 9. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ 7 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. - 14, 0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի 26 բազմաբնակարան բնակելի շենքերից բակերը կառուցման ժամանակվանից չեն նորոգվել, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում բնակիչների համար: Ասֆալտի քայքայման պատճառով մուտքերի մոտ և բակերի ամբողջ տարածքում փոսեր են առաջացել, որոնք հատկապես անանցանելի են դառնում անձրևների ժամանակ:

Այդ իսկ պատճառով խնդիր է առաջացել յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեից հատկացումներ կատարելու առավել անբարեկարգ բակերը նորոգելու համար:

**Ծրագրի խնդիրները.**

1. Կազմել ըստ բակերի ասֆալտապատման նախահաշվային փաստաթղթեր և ներկայացնել համայնքի ղեկավարին ըստ առաջնահերթության:

Պատասխանատու՝ Քաղաքաշինության բաժին, ժամկետ՝ ընթացքում.

2. 2014 թ սկսած, համայնքի տարեկան բյուջեում նախատեսել միջոցներ՝ համաձայն ներկայացված նախահաշիվների:

Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ, ժամկետ՝ բյուջեի հաստատման ժամանակ.

**Ծրագրի իրականացման ժամանակը - 2014 – 2015 - 2016 թվականներ**

**Ծրագրի ակնկալվող արդյունքները.**

Ունենալ բազմաբնակարան բնակելի շենքերի բարեկարգված բակեր, որպեսզի բնակիչները, և հատկապես երեխաները, հնարավորություն ունենա բավարար չափով կազմակերպեն իրենց բակային առօրյան:

**Ծրագիր – 10. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԵՎ ՆԺԴԵՅԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԱՅԹԵՐԻ ԱՍՖԱՆԱՊԱՏՈՒՄ**

**Ծրագրի ընդհանուր արժեքը. - 100,0 մլն. դրամ**

**Ծրագրի հիմնավորումը.**

Համայնքի Բաղրամյան փողոցը 2012 թ հիմնանորոգվել է, իսկ մայթերը՝ ոչ: Երկար տարիների շահագործումից մայթերը քայքայվել են, դարձել անանցանելի: Վթարային վիճակում են գտնվում նաև մայթերի պատերն ու եզրաքարերը:

**Ծրագրի խնդիրները.**

1. Հետևել, որպեսզի ասֆալտվի ծրագրի շարունականությունը և այն ընդգրկվի 2013 թ ծրագրում:  
Պատասխանատու՝ Քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.04.2013թ.

1. Նախագծողների հետ համատեղ ուսումնասիրել այդ ուղղությամբ համայնքում առկա խնդիրները և դրանք ընդգրկել նախագծերում: Ծրագրում մայթերից բացի ընդգրկել նաև կողային պատերը, ճաղավանդակները և ջրատարներն ու եզրաքարերը:

Պատասխանատու՝ Փոխքաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.06.2013թ.

**Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 թվական**

**Ծրագրի ակնկալվող արդյունքները.**

Ունենալ բարեկարգ և բարենորոգ մայթեր, նպաստել մարդկանց անվտանգ շարժին:

**Ծրագիր – 11. ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱՆԱՊԱՏՈՒՄ**

**Ծրագրի ընդհանուր արժեքը. - 150, 0 մլն. դրամ**

**Ծրագրի հիմնավորումը.**

Համայնքի կարևորագույն և բանուկ առանձին փողոցներ ասֆալտապատված չեն, կամ եղած ասֆալտն ամբողջությամբ քայքայվել և շարքից դուրս է եկել:

Մասնակի նորոգումներն անարդյունք են:

Առաջացած փոսերը դժվարացնում են մարդկանց և տրանսպորտային միջոցների երթևեկությունը: Այդ պատճառով խնդիր է առաջացել հարց բարձրացնելու ՀՀ կառավարության առջև՝ միջոցներ հատկացնելու յուրաքանչյուր տարի առնվազն 1 կմ ճանապարհ ասֆալտապատելու համար:

**Ծրագրի խնդիրները.**

1. Ուսումնասիրել և ՀՀ կառավարություն ներկայացնել ասֆալտապատման ենթակա փողոցների վերաբերյալ տվյալներ և համապատասխան նախագծային – նախահաշվային փաստաթղթեր:

Պատասխանատու՝ քաղաքապետ  
ժամկետ՝ մինչև տվյալ տարվա բյուջեի նախագծի կազմումը

**Ծրագրի իրականացման ժամանակը - 2014 - 2016 թվականներ**

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Աստիճանաբար ասֆալտապատել և բարեկարգ տեսքի բերել ներքաղաքային ճանապարհները:

Ծրագիր – 12. ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Ծրագրի ընդհանուր արժեքը. - 14, 0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի առանձին առավել կարևոր փողոցներ ամեն տարի կարիք ունեն ասֆալտի փոսային նորոգումների, դրանք են՝ Նժդեհի, Գայի, Մ. Գևորգի և այլ փողոցներ: Առաջացած փոսերը դժվարացնում են մարդկանց և տրանսպորտային միջոցների երթևեկությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է ամեն տարի համայնքի բյուջեից որոշակի գումար հատկացնել փողոցների փոսային նորոգման աշխատանքները կատարելու համար:

Ծրագրի խնդիրները.

1. Ուսումնասիրել և յուրաքանչյուր տարվա համար ներկայացնել առաջարկություն՝ համայնքի փողոցների ասֆալտի փոսային նորոգումներ կատարման համար:  
Կազմել նախահաշիվներ և ներկայացնել համայնքի ղեկավարին՝ ըստ փողոցների:  
Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին,  
Ժամկետ՝ մինչև տվյալ տարվա բյուջեի նախագծի կազմումը
2. Ավագանու հաստատմանը ներկայացնել ծրագրի որոշման նախագիծը:  
Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ  
Ժամկետ՝ մինչև տվյալ տարվա բյուջեի նախագծի կազմումը

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2016 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Ամեն տարվա նորոգումներով բարեկարգ վիճակում պահել համայնքի փողոցները:

Ծրագիր – 13. ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽՃԱԼՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. - 8, 0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի մի շարք փողոցներ գրունտային են, և ամանցանելի են դառնում հատկապես զարման ձնհալից ու անձրևների վարարումներից հետո: Կա անհրաժեշտություն ամեն տարի համայնքի բյուջեից որոշակի գումար հատկացնել խճալցման և բարեկարգման աշխատանքներ կատարելու համար:

Ծրագրի խնդիրները.

1. Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն ներհամայնքային ճանապարհների խճալցման և բարեկարգման աշխատանքներ կատարելու համար:  
Կազմել նախահաշիվներ և ներկայացնել համայնքի ղեկավարին՝ ըստ փողոցների:  
Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին,  
Ժամկետ՝ մինչև տվյալ տարվա բյուջեի նախագծի կազմումը
2. Ավագանու հաստատմանը ներկայացնել ծրագրի որոշման նախագիծը:  
Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ  
Ժամկետ՝ 01.11./ 2013 – 2014 – 2015 – 2016 թթ

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2016 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Բարեկարգված և երթևեկելի դարձնել համայնքի փողոցներն ու ճանապարհները:

**Ծրագիր – 14. ԹԱՂԱՍԱՍԵՐՈՒՄ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ.**

**Ծրագրի ընդհանուր արժեքը.** – 20,0 մլն. դրամ

**Ծրագրի հիմնավորումը.**

Համայնքում կան թաղամասեր ու փողոցներ, որոնցում կեղտաջրերի հեռացումը կատարվում է բացօթյա առուների միջոցով՝ Կանայան, Ջալայան, Նարեկացի, Մ. Գևորգ և այլն:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կողմից նախատեսված է համալիր ծրագրի իրականացում, սակայն այն ձգձգվում է: Ուստի խնդիր է դրվում՝ մինչև համալիր ծրագրի իրականացումը, ամեն տարի առավել վատ վիճակում գտնվող թաղամասերում կառուցել առվազն 300 - 500 գծմ կոյուղագիծ՝ համայնքի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ համաֆինանսավորմամբ:

**Ծրագրի խնդիրները.**

1. Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն՝ առավել վատ վիճակում գտնվող թաղամասերում յուրաքանչյուր տարի առնվազն 300 - 500 գծմ կոյուղագիծ կառուցելու համար:

Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին, ժամկետ՝ մինչև 01.12.2013թ

2. Ձեռք բերել համապատասխան պայմանավորվածություն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ, կոյուղագծերի վերանորոգման ու կառուցման ֆինանսավորման համար:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.05.2013 թ.

**Ծրագրի իրականացման ժամանակը** - 2013 - 2016 թվականներ

**Ծրագրի ակնկալվող արդյունքները.**

Ջրահեռացման համակարգի կառուցումով համայնքում ապահովել բավարար սանիտարական վիճակ:

**Ծրագիր – 15. ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ, ԾԱՂԿՈՒՆՅԱՑ, Մ. ԳԵՎՈՐԳԻ, Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ**

**Ծրագրի ընդհանուր արժեքը.** - 8, 0 մլն. դրամ

**Ծրագրի հիմնավորումը.**

Համայնքի Գայի, Ծաղկունյաց, Մ. Գևորգի և Պ. Սևակի փողոցները բանուկ փողոցներ են, գիշերային ժամերին նրանցով երթևեկելն անհնարին է:

Նրանց գիշերային լուսավորության վերականգնումը խիստ հրատապ խնդիր է:

**Ծրագրի խնդիրները.**

1. Կազմել համապատասխան նախահաշիվներ և ներկայացնել համայնքի ղեկավարին ըստ փողոցների:

Պատասխանատու՝ Քաղաքաշինության և կոմունալ բաժիններ  
ժամկետ՝ մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1 – ը

2. Ամեն տարի համայնքի տարեկան բյուջեն կազմելուց նախատեսել որոշակի գումարներ, համաձայն՝ ըստ տարիների ներկայացված նախահաշիվների:

Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ  
ժամկետ՝ մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա սկիզբ

**Ծրագրի իրականացման ժամանակը** - 2013 - 2016 թվականներ

**Ծրագրի ակնկալվող արդյունքները.**

Լուսավորել համայնքի փողոցներն ու ճանապարհները, գիշերային ժամերին բնակչության համար ստեղծել անվտանգ ճանապարհներ:

**Ծրագիր – 16. ԳԵՐԵՋՄԱՆԱՏՆԵՐԻ ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒՄ**

**Ծրագրի ընդհանուր արժեքը.** -- 15,0 մլն. դրամ

**Ծրագրի հիմնավորումը.**

Համայնքի 3 գերեզմանատները կարիք ունեն քարից պարսպապատման:

Եղած բետոնյա և մետաղական ցանկապատերն ունեն 40 - 50 տարվա վաղեմություն և հիմնականում քայքայվել ու շարքից դուրս են եկել:



Գտնվելով համայնքի բնակեցված տարածքների հարևանությամբ, նրանց առկայությունը անհարմարություններ է ստեղծում և պահպանության, և բնակչության ու հատկապես երեխաների համար:

Ծրագրի խնդիրները.

1. Նախապատրաստել 3 գերեզմանատների պարսպապատման նախահաշվային – նախագծային փաստաթղթեր:

Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին, ժամկետը՝ մինչև 01.08.2013 թ

2. Գտնել ծրագիրը ֆինանսավորող դոնոր կազմակերպություն:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ 2013, 2014, 2015 թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2014 – 2016 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Համայնքի 3 գերեզմանատները կունենան քարից պարիսպ, որի շնորհիվ կլինեն և պաշտպանված տարբեր ազդեցություններից և այն բնակչության / երեխաների / համար կլինի անվտանգ: Բոլորի համար սրբություն հանդիսացող տարածքները կլինեն անձեռնմխելի:

Ծրագիր – 17. ԶԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. – 15, 0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի զբոսայգին գտնվում է անբարեկարգ վիճակում, որը դադարել է իր նպատակին ծառայելուց: Բնակչությունը, և հատկապես երեխաները, կարիք ունեն ազատ ժամանցի և հանգստի կազմակերպման, որի նպատակին կարող է ծառայեցվել բավարար կառուցապատված զբոսայգին՝ սրճարաններով, կարուսելներով և այլ պարագաներով:

Ծրագրի խնդիրները.

1. Կազմել համապատասխան նախագծային – նախահաշվային փաստաթղթեր և ներկայացնել համայնքի ղեկավարին:

Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին, ժամկետ՝ մինչև 01.09.2013 թ.

2. Համայնքի բյուջեով կամ դոնոր կազմակերպության միջոցով լուծել ֆինանսավորման խնդիրը,

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ ընթացքում.

3. Ավագանու քննարկմանը ներկայացնել զբոսայգու կառուցապատումը մասնավոր անձանց վարձակալությամբ հանձնելու նպատակահարմարությունը:

Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ, ըստ անհրաժեշտության

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 – 2015 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

1. Համայնքը կունենա կառուցապատված զբոսայգի, որտեղ բնակիչները կանցկացնեն իրենց ազատ ժամանցը և ակտիվ հանգիստը:

Ծրագիր – 18. Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 4 , 0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի Տ.Պետրոսյանի անվան կանաչ տարածքը կարող է կառուցապատվել և բնակչության համար դառնալ ազատ ժամանցի և հանգստի գոտի դառնալ, ինչի շնորհիվ էլ կավելանան համայնքի կանաչ տարածքները:

Ծրագրի խնդիրները.

1. Կազմել համապատասխան նախագիծ - նախահաշիվ և ներկայացնել համայնքի ղեկավարին:

Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին, ժամկետ՝ մինչև 01.07.2013թ.

2. Համայնքի բյուջեով կամ դոնոր կազմակերպության միջոցով լուծել ֆինանսավորման խնդիրը:  
Պատասխանատու՝ քաղաքապետ, ընթացքում

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 -2015 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Ստեղծել կառուցապատված բարեկարգ հանգստի գոտի և կանաչ տարածք, որտեղ բնակչությունը կանցկացնի իր ազատ ժամանցը և հանգիստը:

Ծրագիր – 19. ՀՈՒՇԱՂՔՅՈՒՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 5,0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Քաղաքային զբոսայգու հարևանությամբ, Գայի փողոցի վրա գտնվող հուշաղբյուրը կառուցվել է 1940 - ական թվականներին՝ ճարտարապետ Գ. Թամանյանի նախագծով: Տարիների ընթացքում հուշաղբյուրը տարբեր պատճառներով վնասվել է՝ կան փլված քարեր, վնասվել են ջրածորակները, ջրահեռացման համակարգը, անհրապույր է դարձել շրջակայքը:  
Հուշաղբյուրի վերակառուցման խնդիրը բարձրացվել է նաև ՀՀ մշակույթի նախարարության առջև, ըրպեսզի համատեղ ուժերով այն շտապ վերականգնվի:

Ծրագրի խնդիրները.

1. Հետևողականություն հանդես բերել, որպեսզի ՀՀ մշակույթի նախարարությունը հուշաղբյուրի վերականգնումը ընդգրկի ծրագրում:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մշտապես.

2. ՀՀ մշակույթի նախարարության հուշարձանների վերականգնման գերատեսչության միջոցով կազմել համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Պատասխանատու՝ քաղաքապետ, ժամկետ՝ մինչև 01.08.2013թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 -2014 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Վերականգնել հուշաղբյուրի ճարտարապետական տեսքը, այն համայնքի բնակչության համար դարձնել հաճելի ժամանցի գոտի:

Ծրագիր - 20. ՄԱՆԿԱԿԱՆ 6 ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 8,0 մլն. դրամ

Ծրագրի հիմնավորումը.

Համայնքում կա մանկական խաղահրապարակների պահանջարկ: Առկա 6 խաղահրապարակները չեն բավարարում պահանջարկը, և բացի այդ դրանք առանձին թաղամասերից գտնվում են բավականին հեռավորության վրա, որոնք շատ երեխաների համար հասանելի չեն:

Ծրագրի խնդիրները.

1. Կազմել 6 խաղահրապարակների տեղադրման ու կառուցապատման համապատասխան նախագիծ ու նախահաշիվ և ներկայացնել համայնքի ղեկավարին:

Պատասխանատու՝ քաղաքաշինության և կոմունալ բաժիններ ժամկետ՝ մինչև 01.06.2013թ.

2. Համայնքի բյուջեով և Վորլդ Վիժն կազմակերպության միջոցով լուծել ֆինանսավորման խնդիրը:  
Պատասխանատու՝ քաղաքապետ, ընթացքում

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 -2015 թվականներ

Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Երեխաների համար կստեղծվեն ազատ ժամանակի և հանգիստի կազմակերպման հնարավորություն

## Ծրագիր – 21. ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՅՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 2,0 մլն. դրամ

### Ծրագրի հիմնավորումը.

Համայնքի դաշտամիջյան ճանապարհները ողողվում են հատկապես գարնան ձնհալից հետո, որը դժվարություն է ստեղծում խոտհնձի և բերքահավաքի ժամանակ գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ու բերքը տուն բերելու համար:

Դաշտամիջյան ճանապարհները մշտապես նորոգված վիճակում պահելը կարևոր խնդիր է::

### Ծրագրի խնդիրները.

1. Կազմել համապատասխան նախագիծ և նախահաշիվ և ներկայացնել համայնքի ղեկավարին:  
Պատասխանատու՝ քաղաքաշինության բաժին, ժամկետ՝ մինչև 01.07.2013թ.
2. Համայնքի տարեկան բյուջեն կազմելուց հատկացնել համապատասխան գումարներ՝ նորոգումները 2013 և 2015 թվականներին կատարելու համար:  
Պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ, ժամկետ՝ 01.07.2013թ - 2015 թ.

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2015 թվականներ

### Ծրագրի ակնկալվող արդյունքները.

Դաշտամիջյան ճանապարհները մշտապես կլինեն նորոգված, անցանելի և անվտանգ վիճակում, որի շնորհիվ բնակչությունը հավաքած բերքը անվնաս կհասցնի տուն:

## Ծրագիր – 22 . ՄԵՔԵՆԱ - ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 15, 0 մլն. դրամ

### Ծրագրի հիմնավորումը.

Համայնքը կարիք ունի գյուղատնտեսական տեխնիկայի՝ վարող տրակտորի, հացահավաք կոմբայնի, ինչպես նաև կոմունալ տնտեսության համար անհրաժեշտ՝ էքսկավատորի, ամբարձիչի: Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության հետևանքով հողը չի մշակվում:  
Կոմունալ տնտեսության առօրյա աշխատանքները անհնարին է կազմակերպել օպերատիվորեն

### Ծրագրի խնդիրները.

1. Կազմել համայնքին անհրաժեշտ մեքենաների և տեխնիկայի ցանկը, ուսումնասիրել համայնքի հնարավորությունները և ձգտել աստիճանաբար դրանց ձեռք բերմանը՝ համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցով:  
Պատասխանատու՝ Աշխատակազմի քարտուղար, ժամկետ՝ մինչև 01.06.2013 թ
2. Ավագանու հաստատմանը ներկայացնել ծրագրի որոշման նախագիծը:  
Պատասխանատու՝ ՖՏ բաժին, ժամկետ՝ մինչև տվյալ տարվա բյուջեի նախագծի կազմումը

Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2016 թվականներ

### Ծրագրի ակնկալվող արդյունքները.

1. Համայնքն ապահովել գյուղատնտեսական տեխնիկայով, նպաստել գյուղատնտեսության զարգացմանը և հողի մշակման արդյունավետության բարձրացմանը:
2. Կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպել օպերատիվորեն:

## Ծրագիր – 23. ԲՈՒՂ – Ի ԿԱՍ ՔՈԼԵՋ – ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ

Ծրագրի ընդհանուր արժեքը. -- 0

### Ծրագրի հիմնավորումը.

Համայնքում չկա բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն: Շատ աղքատ ընտանիքների ուսումնատենչ երեխաներ հնարավորություններ չունեն իրենց ուսումը շարունակելու Երևան քաղաքում:  
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հաստատության հիմնումը խիստ հրատապ և այժմեական խնդիր է::

**Ծրագրի խնդիրները.**

1. Առաջարկությամբ դիմել ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը:  
Հետևել խնդրի լուծմանը  
Պատասխանատու՝ Քաղաքապետ, ժամկետը՝ 04 – 05 / 2013 թ
2. Ուսումնասիրել ուսումնական հաստատության համար անհրաժեշտ շենքային տարածք հատկացնելու խնդիրը և համապատասխան լուծում տալ:  
Պատասխանատու՝ Քաղաքապետի տեղակալ, ժամկետը՝ 06 - 07 / 2013 թ

**Ծրագրի իրականացման ժամանակը - 2013 - 2014 թվականներ**

**Ծրագրի ակնկալվող արդյունքները.**

Համայնքում ունենալ բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, դրանով նպաստել սոցիալապես անապահով և ուսումնատենչ երեխաների ուսմանը:

**ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ**

Հի	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2013	2014	2015	2016	Ընդամենը
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)</b>	279000,0	609500,0	571500,0	88400,0	1548400,0
Ա.	<b>ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ</b>	-	-	-	-	-
Բ.	<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>	279000,0	609500,0	571500,0	88400,0	1548400,0
1.	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	279000,0	609500,0	571500,0	88400,0	1548400,0
1.1	<b>Շենքեր և շինություններ</b>	267000,0	606500,0	569500,0	87000,0	1530000,0
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում	-	-	-	-	-
	-Շենքերի և շինությունների կառուցում	33000,0	414000,0	405000,0	5000,0	857000,0
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	234000,0	192500,0	164500,0	82000,0	673000,0
1.2	<b>Մեքենաներ և սարքավորումներ</b>	12000,0	3000,0	2000,0	1400,0	18400,0
	-Տրանսպորտային սարքավորումներ	12000,0	3000,0	-	-	15000,0
	-Վարչական սարքավորումներ	-	-	2000,0	1400,0	3400,0
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	-	-	-	-	-
1.3	<b>Այլ հիմնական միջոցներ</b>	-	-	-	-	-
	-Աճեցվող ակտիվներ	-	-	-	-	-
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ	-	-	-	-	-
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	-	-	-	-	-
	-Նախագծահետազոտական ծախսեր	-	-	-	-	-

Հի	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2013	2014	2015	2016	Ընդամեն
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	-	-	-	-	-
1.	<b>Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ</b>	279000,0	609500,0	571500,0	88400,0	1548400,0
2.	<b>Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհ</b>	20000,0	20000,0	20000,0	20000,0	80000,0
	Այլ պետությունների ՏԻՄ-երից	43000,0	52000,0	19000,0	9000,0	123000,0
	Միջազգային կազմակերպություններից	-	-	-	-	-
3.	<b>Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	43000,0	52000,0	19000,0	9000,0	123000,0
	Պետական բյուջեից նպատակային հատկացումներ	216000,0	537500,0	532500,0	59400,0	1345400,0
	ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհ	210000,0	537500,0	532500,0	59400,0	1345400,0
4.	<b>Պետական բյուջեից վարկ</b>	-	-	-	-	-
5.	<b>Առևտրային բանկից վարկ</b>	-	-	-	-	-
6.	<b>Համայնքային արժեթղթերի թողարկումից</b>	-	-	-	-	-
7.	<b>Մասնավոր հատվածի ներդրումներ</b>	-	-	-	-	-
8.	<b>Բնակչության ներդրումներ</b>	-	-	-	-	-
9.	<b>Այլ</b>	-	-	-	-	-





## 7. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հ/հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2012թ. փաստ.	2013թ. կանխ.	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1	2	3	5	6	7	8	9
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	2815.8	2815.8	3715,8	3715,8	3715,8
2.	Բնակչության թիվը	հազ. մարդ	7067	7080	7120	7150	7200
3.	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը	շենք	26	26	26	26	26
-	ընդհանուր մակերեսը	քմ	53868	53868	53868	54500	54500
-	բնակարանների թիվը	բնակար.	804	804	804	820	820
4.	Վթարային շենքերի թիվը, այդ թվում՝	շենք	11	11	11	10	9
-	II կարգի վթարային շենքեր	- // -	-	-	-	-	-
-	III կարգի վթարային շենքեր	- // -	9	9	9	8	8
-	IV կարգի վթարային շենքեր	- // -	2	2	1	1	-
5.	Վերելակային տնտեսություն	-----	-	-	-	-	-
6.	Ավտոտնակների թիվը	հատ	120	125	130	135	140
7.	Համատիրությունների թիվը	հատ	14	14	14	6	6
8.	Լիազորագրային կառավարման բնակելի շենք	շենք	12	12	12	2	2
9.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	1500	1880	1900	1900	2000
	այդ թվում՝ բնակչությունից		1200	1500	1550	1550	1600
10.	Սան. մաքրման և աղբահանության մեքենա-մեխանիզմների քանակը	միավոր	1	1	2	2	2
11.	Սանիտարական մաքրման տարածքը	հա	260	260	260	260	260
12.	Տեխնիկական պատրաստականության ՕԳԳ	գործակից	0,5	0,5	0,6	0,8	1,0
13.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	3,3	3,3	3,3	4,8	6,0
14.	Ոռոգելի տարածքի մակերեսը	հա	120	120	120	150	200
15.	Մեկ բնակչին ընկնող կանաչ տարածքը	քմ	20,0	20,0	20,0	20,0	20,0
16.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	32	32	32	32	33
17.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	250	250	250	250	258
18.	Առևտրի և սպասարկման օբյեկտի թիվը, ԱԹ՝ առևտրի օբյեկտներ	հատ	45	47	53	58	65
	բենզինի լիցքավորման կետեր		35	35	39	44	50
	գազի լիցքավորման կետեր		1	2	2	2	2
	գազի լիցքավորման կետեր		2	2	2	2	2
19.	Համայնքի սեփականության հողերի մակերեսը	հա	1580.18	1578.87	1572.0	1565.0	1560.0
20.	Պետական պահուստային հողերի մակերեսը	հա	142.84	142.84	142.84	142.84	142.84
	Պահուստային հողերի օգտ. մակարդակը	%	100	100	100	100	100
21.	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	245	250	255	240	220
22.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	2	2	2	2	2
	շենքերի տարածքը	քմ	540	540	540	540	1200
	երեխաների թիվը	մարդ	140	150	150	150	200
	խմբերի թիվը	խումբ	6	6	6	6	8
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	4	3	3	3	3
	աշակերտների թիվը	մարդ	830	850	850	870	900
24.	Երաժշտական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1
	բաժինների թիվը	բաժին	2	2	2	2	2
	խմբերի թիվը	խումբ	11	11	12	12	13
	սովորողների թիվը	մարդ	135	150	155	160	160
25.	Մարզադպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1
	մարզաձևերի թիվը	հատ	6	6	6	7	8
	խմբերի թիվը	խումբ	9	9	10	11	12
	երեխաների թիվը	մարդ	90	95	110	120	130
26.	Արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1
	երեխաների թիվը	մարդ	75	78	85	90	100
	խմբերի թիվը	խումբ	8	8	8	8	8
27.	Մշակութային հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1
	երեխաների թիվը	մարդ	102	105	115	125	140
	խմբերի թիվը	խումբ	5	5	6	7	8
28.	Հիվանդանոցների թիվը	հատ	1	1	1	1	1
	մահճակալների թիվը	հատ	60	60	60	60	60
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	1	1	1	1	1
	այցելուների թիվը	մարդ	55	65	70	70	80
30.	Անապահով ընտանիքների թիվը	ընտ.	450	460	460	440	400

31.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	1123	1130	1130	1135	1135
32.	Հաշմանդամների թիվը	մարդ	534	530	520	500	500
33.	Պատերազմի և աշխ. վետերանների թիվը	մարդ	560	570	574	580	585
34.	Գործազուրկների թիվը	մարդ	107	110	115	125	130
35.	Ընտանեկան նպաստառու ընտանիքների թիվը	ընտանիք	250	253	250	240	220
36.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ.դրամ	18.0	20.4	21.0	21.5	22.0
37.	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի եկամուտների մեջ	%	30	30,9	32	34	35
38.	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	11	13	14	15	15
39.	այդ թվում՝ սեփական միջոցների հաշվին	%	11	13	14	15	15
40.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ	%	102,9	105.0	105.0	105.0	105.0
41.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ	%	96,6	95,0	95,0	96,0	98,0
42.	Համայնքի աշխատողների աշխատավարձերի տեսակարար կշիռը բյուջեի ծախսերի մեջ	%	70	68,7	68,0	65,0	62,0
43.	Համայնքի աշխատողների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը բյուջեի ծախսերի մեջ	%	26	24,4	24,4	24,4	24,4



**Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք**

**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժին

**ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ**

1. Ֆինանսատնտեսագիտական բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
2013 Թ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

- Աշխատակիցների թվաքանակը` 30
- Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիր N	Դրույքաչափ /ՀՀ դրամ/
1	Քաղաքապետ	-	180000
2	Քաղաքապետի տեղակալ	-	144000
<b>ԱՇԽԱՏԱԿԱԶՄ</b>			
3	Աշխատակազմի քարտուղար	1.2 – 1	112000
4	Գլխավոր մասնագետ	2.3 – 2	75000
5	Գլխավոր մասնագետ	2.3 – 3	75000
6	Գլխավոր մասնագետ	2.3 – 4	75000
7	Գլխավոր մասնագետ	2.3 - 7	75000
8	Առաջատար մասնագետ	3.1 - 4	64000
9	Առաջատար մասնագետ	3.1 - 5	64000
10	Առաջատար մասնագետ	3.1 - 6	64000
11	Առաջատար մասնագետ	3.1 - 8	64000
<b>ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺԻՆ</b>			
12	Բաժնի պետ	1.3 - 1	92000
13	1-ին կարգի մասնագետ	3.2 - 4	52000
<b>ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺԻՆ</b>			
14	Բաժնի պետ	2.1 - 3	92000
<b>ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ</b>			
15	Բաժնի պետ- գլխավոր հաշվապահ	2.1 - 2	92000
16	Գլխավոր մասնագետ	2.3 - 1	75000
17	Առաջատար մասնագետ	3.1 - 1	64000
18	Առաջատար մասնագետ	3.1 - 2	64000
19	Առաջատար մասնագետ – հաշվապահ	3.1 - 9	64000
20	1-ին կարգի մասնագետ	3.2 - 1	52000
21	1-ին կարգի մասնագետ	3.2 - 2	52000
<b>ՏԵԽՆՊՈՒՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ`</b>		<b>8,7</b>	<b>X</b>

Ծանոթություն. աշխատողին տրվող բարձր լեռնայինի 20 % հավելավճարը չի մտնում դրույքաչափի մեջ

**ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԳՈՒՅՔԻ  
ՑԱՆԿԸ**

Հ ԱՍՏԱՏՎԱԾ Է՝  
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
24.01.2013 Թ N 03-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

**Ց ՈՒ Ց Ա Կ**

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ – 01. 01. 2013 Թ.

**Հողատարածքներ**

Հ/Հ	Հողատեսքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Ծանոթություն
1	Քաղաքի վարչական տարածք Այդ թվում՝	հա	2815,8	
2	Համայնքի սեփականություն հողատարածք Որից՝	հա	1578,87	
3	գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	1381,67	
4	ոչ գյուղ. նշանակության հողեր	հա	197,2	

**Շենք-շինություններ**

Հ/Հ	Հիմնական միջոցների անվանումը	Չ/Մ	ՔԱՆԱԿ	Ծանոթություն
1	Քաղաքապետարանի վարչական շենք	հատ/քմ	1/1189	
2	Մշակույթի կենտրոնի շենք	հատ/քմ	1/974	
3	Մշակույթի տան շենք	հատ/քմ	1/479	
4	Արվեստի դպրոցի շենք	հատ/քմ	1/417	
5	Սարգադպրոցի շենք	հատ/քմ	1/597	
6	Բաղրամյան N14 շենքի բացվածք՝ գրադարանի շենք	հատ/քմ	1/432	
7	Գ.Նժդեհ N-25 կառուցվելիք շենքի հիմքեր	հատ/քմ	1/403	
8	Թիվ 12 շենքի բացվածք /4մ x 9.4մ/	հատ/քմ	4/37,6	
9	Թիվ 46 շենքի բացվածք /6մ x 9.8մ/	հատ/քմ	6/56,4	
10	Էլ. հոսանքի ենթակայանի շենք /Թումանյան փողոց/	հատ/քմ	1/24,8	
11	Մշակույթի պալատի կիսակառույց շենք	հատ/քմ	1/6708,24	Նվիրաբերություն՝ Մայր աթոռին
12	Դատախազության վարչական շենք - Գայի 9/1	քմ	220,83	Նվիրաբերություն՝ դատախազությանը
13	4 սենյականոց բնակարան Բաղրամյան 14/27	քմ	91,51	Նվիրաբերություն Եղիազար Եղիազարյան
14	1 սենյականոց բնակարան Բաղրամյան 19/50	քմ	45,89	Նվիրաբերություն Անուշավան Խաչատրյան
15	2 սենյականոց բնակարան Բաղրամյան 43/18	քմ	47,85	Նվիրաբերություն Սերգեյ Իսրայելյան
16	1 սենյականոց բնակարան Գ.Նժդեհ 7/1	քմ	35	Նվիրաբերություն Աղավնիկ Թորոզյան
17	1 սենյականոց բնակարան Գ.Նժդեհ 7/2	քմ	23,01	Նվիրաբերվել է՝ Ամալյա Գրիգորյանին
18	1 սենյականոց բնակարան Գ.Նժդեհ 7/5	քմ	58,28	Նվիրաբերություն Արմեն Աղամյան
19	1 սենյականոց բնակարան Գ.Նժդեհ 13/1	քմ	43,19	Նվիրաբերություն Զուլիխտա Խալափյան
20	2 սենյականոց բնակարան Գ.Նժդեհ 13/22	քմ	54,02	Նվիրաբերություն Իզաբելա Հայրապետյան
21	2 սենյականոց բնակարան Մ.Գևորգ 1/31	քմ	49,83	Նվիրաբերություն Էվելինա Ասլանյան

Կառուցվածքներ

Հ/Հ	Հիմնական միջոցների անվանումը	Չ/Մ	Քանակ /մակե	Ծանոթություն
1	Մարզադաշտ	հատ/քմ	1/12640	
2	Լողավազան բացօթյա /կիսաավերակ /	հատ/քմ	1/1367	
3	Քաղաքային զբոսայգի	հատ/քմ	1/14592	
4	«Վերածնունդ» հուշահամալիր	հատ/քմ	1/60000	
5	Քաղաքային պանթեոն՝ հուշաղբյուրով	հատ	1	
6	«Մայրական ձեռքեր» հուշաղբյուր	հատ	1	
7	«Գրգռան աղբյուր» հուշաղբյուր, հանգստի գոտի	հատ/քմ	1/1000	
8	Զբոսայգու հուշաղբյուր	հատ/քմ	1/20	
9	Տ.Պետրոսյանի արձան և հանգստի գոտի	հատ/քմ	1/850	
10	«Սիրո աղբյուր» հուշաղբյուր	հատ/քմ	1/20	
11	Զորավար Դրոյի կիսանդրի	հատ	1	
12	Զորավար Զալալյանի կիսանդրի	հատ	1	
13	Քաղաքային կանգառ	հատ/քմ	1/20	
14	Քաղաքային կամուրջներ	հատ	7	
15	Տ. Պետրոսյանի անվ. հրապարակ	հատ/քմ	1/3040	
16	Ներքաղաքային ճանապարհներ	կմ	32	
17	Բնակելի շենքերի կաթսայատներ	հատ	7	
18	Քաղաքային գերեզմանատներ	հատ/քմ	4/41240	
19	Սելավատար / քյանդալ /	հատ/գմ	1/1200	
20	Քաղաքային աղբավայր	հա	5,7	

Տրանսպորտային միջոցներ

Հ/Հ	Հիմնական միջոցների անվանումը	Չ/Մ	Քանակ	Ծանոթություն
1	Գազ 31-105	հատ	1	
2	Գազ 24-10	հատ	1	
3	Տ – 130 բուլդոզեր	հատ	1	
4	ԴՏ – 75 տրակտոր	հատ	1	
5	Աղբատար ավտոմեքենա ԶԻԼ – 43362 ԿՕ - 449-10	հատ	1	
6	Սան մաքրման ավտոմեքենա ԶԻԼ - 130	հատ	1	